# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ (SARS-CoV-2) ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐԱԿԻ (COVID-19) ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ/ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՎ ՇԵՆՔՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ/ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՀՊԱՆՎԵԼԻՔ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ

## Ի՛ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՏՈՐԴԻ, ԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ



Մինչև քվեարկության շենք մտնելը տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորված անձի մոտ անցե՛ք ջերմասքրինինգ (ջերմաստիճանի ստուգում): Տենդ՝ 37°C կամ 37°C-ից բարձր ջերմաստիճան, արձանագրվելու դեպքում, դուք կենթարկվեք ջերմաստիճանի կրկնական ստուգման (5 րոպեանոց ընդմիջումով):

Տենդի կրկնակի արձանագրման դեպքում դիտորդին, ընտրական սուբյեկտի և լրատվամիջոցի ներկայացուցչին թույլ չի տրվի մուտք գործել քվեարկության շենք:

Մինչև քվեարկության սենյակ մտնելը մշակե՛ք ձեր ձեռքերը մուտքի մոտ տեղադրված ձեռքերի ախտահանիչ հեղուկով:

Քվեարկության շենք մտնելիս և շենքում գտնվելու ժամանակահատվածում կրե՛ք դիմակ:

Ձեզանից չի պահանջվի դիմակ կրել, եթե առողջական վիճակի պատճառով դժվարանում եք դիմակ կրել, ինչը հավաստվում է բժշկական/բժշկի տեղեկանքով կամ համապատասխան հիվանդության մասին որևէ տեսակի հավաստող փաստաթղթով:

Դիմակ կրելու կարգը խախտելու դեպքում դիտորդին, ընտրական սուբյեկտի ներկայացուցչին և լրատվամիջոցի ներկայացուցչին կտրվի նախազգուշացում: Եթե անձը, չնայած նախազգուշացմանը, շարունակում է խախտել դիմակ կրելու կանոնները, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը նրան քվեարկության շենքը լքելու ցուցում է տալիս: Եթե խախտողը չի հեռանում քվեարկության շենքից, տեղամասային ընտրական հանձնաժողովը սահմանված կարգով որոշում է կայացնում տեղամասից նրա հեռացման մասին: Հանձնաժողովի որոշումն ի կատար ածելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, կկանչվի ոստիկանություն:

Եթե քվեարկության շենքում գտնվելու ժամանակ արձանագրվի կրկնական ջերմասքրինինգի անհրաժեշտություն և ստուգման հետևանքով Ձեզ մոտ հաստատվի տենդ, պետք է հեռանաք քվեարկության շենքից:

Եթե կրկնական ջերմասքրինինգի հետևանքով տենդի արձանագրման դեպքում դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը կամ լրատվամիջոցի ներկայացուցիչը չի հեռանում քվեարկության շենքից, տեղամասային ընտրական հանձնաժողովը սահմանված կարգով որոշում է կայացնում այդ անձին ընտրատեղամասից հեռացնելու մասին: Հանձնաժողովի որոշումն ի կատար ածելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, կկանչվի ոստիկանություն:

Եթե տենդ արձանագրելու պատճառով քվեարկության շենք թույլ չի տրվել մտնել ընտրական սուբյեկտի ներկայացուցչին, կամ նա լքել է քվեարկության շենքը, ապա ընտրական սուբյեկտն իրավունք ունի նշանակել այլ ներկայացուցիչ, որին թույլ կտրվի մուտք գործել քվեարկության շենք՝ Վրաստանի քաղաքացու ինքնության վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը ներկայացնելուց և ընտրական վարչության համապատասխան էլեկտրոնային ծրագրում նրա նշանակման վերաբերյալ տեղեկությունը վերստուգելուց հետո:

Քվեարկության շենքում տեղադրված փակ տարայի մեջ տեղադրե՛ք օգտագործած մեկանգամյա անձեռոցիկները և այլ հիգիենիկ միջոցներ:

Քվեարկության շենքից հեռանալիս օգտվե՛ք մուտքի մոտ ապահովված ձեռքերի ախտահանիչ լուծույթից:

ՑԵՍԿՈ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՌԵՖՈՐՄԱՅԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
USAID FROM THE AMERICAN PEOPLE
International Foundation for Electoral Systems